	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ստանդիվ</i> <i>29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն</i> <i>1</i>	<i>1/1</i>

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ֆինանսական գործիքներով  
բրոքերային ծառայությունների մատուցման մասին

ք. Երևան

“\_\_\_” \_\_\_\_\_ 201 թ.


«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (հետագայում՝ **Բանկ**), ի դեմս գործադիր տնօրեն Ս. Դավթյանի, որը գործում է բանկի կանոնադրության հիման վրա մի կողմից և «-----» -ն (հետագայում՝ **Հաճախորդ**), ի դեմս -----ի մյուս կողմից (հետագայում միասին՝ **Կողմեր**), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Հաճախորդը՝ Բանկի ընձեռնած հնարավորություններով և պայմաններով իրականացնում է ֆինանսական գործիքներով գործառնություններ, իսկ Բանկը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով հաճախորդին մատուցել բրոքերային ծառայություններ՝ սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված ֆինանսական գործիքներով, սկզբունքներով և սակագներով, մասնավորապես՝
- Ընդունել Հաճախորդի հանձնարարականները վերջինիս հաշվին ֆինանսական գործիքներով գործարքներ կատարելու վերաբերյալ, հաղորդել դրանք ի կատարումն այլ անձանց:
  - Հաճախորդի հանձնարարականների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից կատարել ֆինանսական գործիքներով գործարքներ:
  - Հաճախորդի հանձնարարականների հիման վրա, Հաճախորդի հաշվին և Հաճախորդի անունից կատարել ֆինանսական գործիքներով գործարքներ:
  - Պայմաններում նշված պայմաններով և կարգով իրականացնել անհրաժեշտ փոխհաշվարկ՝ գործարքների իրականացման համար պահանջվող միջոցները փոխանցելով Հաճախորդի հաշիվներից և գործարքների արդյունքում ստացվող միջոցները մուտքագրելով Հաճախորդի հաշիվներին:
  - Հաճախորդին տրամադրել հաշվետվություններ՝ իրականացված գործարքների, իրականացված գործարքների մանրամասների, ինչպես նաև Հաճախորդի միջոցների շարժի վերաբերյալ:
- 1.2. Եթե որևէ երկրում Հաճախորդին արգելվում է Հավելված 1-ում նշված ֆինանսական գործիքներով գործառնությունները կամ գործառնությունների մի մասն իրականացնելը, կամ եթե Բանկն իրավունք չունի տվյալ երկրում Հավելված 1-ում նշված ֆինանսական գործիքներով գործառնությունների որևէ մասով (առանձին սկզբունքներով կամ առանձին ֆինանսական գործիքներով) բրոքերային ծառայություններ մատուցելու, ապա տվյալ երկրում և/կամ տվյալ երկրի ռեզիդենտ Հաճախորդը պարտավոր է կիրառել Հավելված 1-ում նշված միայն այն ֆինանսական գործիքներն ու գործառնությունները, որոնց մասով տվյալ երկրում չկան օրենսդրական սահմանափակումներ:

### 2. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


- 2.1. Հաճախորդը նախքան հաշվի բացումը և գործարքների իրականացման սկիզբը ստորագրում է «Ռիսկերի մասին ծանուցումը» (հավելված 2): Սույն պայմանագրով Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Բանկի «Ֆինանսական շուկաներում իրականացվող գործարքների արդյունքում հնարավոր շահերի բախման սահմանափակման քաղաքականությանը»:
- 2.2. Գործարքներ իրականացնելու համար Հաճախորդը Բանկում բացում է ընթացիկ բանկային հաշիվ No.....: Բանկային հաշվի գործառնությունները (հաշվի բացում, սպասարկում, փոխանցում, կանխիկ մուտքագրում, կանխիկ տրամադրում, տոկոսների վճարում և այլն) իրականացվում են համաձայն Բանկի սակագների:
- 2.3. Բանկային հաշվի բացմանը զուգընթաց Բանկում Հաճախորդի անունով բացվում է նաև բրոքերային հաշիվ No....., որն ընդգրկում է երկու կամ ավելի ենթահաշիվներ՝ դրամական միջոցների, ֆինանսական գործիքների կամ ֆինանսական գործիքների խմբերի առանձնացված արտացոլման նպատակով:
- 2.4. Սույն պայմանագրի 2.3. կետում նշված ենթահաշիվներից մեկը կամ մի քանիսը կարող են հանդիսանալ որպես արժեթղթերի հաշիվ (հաշիվներ), որոնց վրա Բանկը հաշվառում է սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում Հաճախորդի կողմից օգտագործվող և գործարքների արդյունքում ստացված արժեթղթերը: Նման ենթահաշիվների (արժեթղթերի հաշիվներ) բացման անհրաժեշտության դեպքում, բացի սույն պայմանագրից Կողմերը կնքում են նաև Պահառության պայմանագիր, որով էլ սահմանվում են այդ ենթահաշիվներով իրականացվող հաշվառման, պահառության կանոններն ու սակագները:
- 2.5. Բրոքերային հաշվին մուտքագրված միջոցները (հաշվի մնացորդը) ապահովում են սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդի ստանձնած բոլոր պարտավորությունների պատշաճ կատարումը:
- 2.6. Բրոքերային հաշվի սկզբնական մնացորդի մեծությունը սահմանափակվում է նվազագույն և առավելագույն գումարներով, որոնք սահմանվում են հավելված 1-ում, ընդ որում, հավելված 1-ում նշված սահմանաչափերից շեղումներ թույլատրվում է միայն Բանկի լրացուցիչ համաձայնությամբ՝ Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:
- 2.7. Սույն պայմանագրի շրջանակներում հաշվարկային արժույթ է ընդունվում հավելված 1-ում նշված արժույթը:
- 2.8. Բրոքերային հաշվին պահվող ֆինանսական գործիքները և դրամական միջոցները լիովին առանձնացված են: Հաճախորդին պատկանող և բրոքերային հաշվին արտացոլված ֆինանսական գործիքները և դրամական միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չի կարող օգտագործվել Բանկի կողմից՝ առանց Հաճախորդի գրավոր համաձայնության:

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ստանաթիվ 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/2</i>

- 2.9. Բրոքերային հաշիվը կարող է համարվել կամ նվազեցվել յուրաքանչյուր օր՝ հավելված 1-ում նշված ժամանակահատվածում, բացառությամբ շաբաթ և կիրակի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ աշխատանքային օրերի: Հաճախորդը կարող է համարել բրոքերային հաշվի դրամական ենթահաշիվը (միջոցներ մուտքագրել) միմիայն սույն պայմանագրի 2.2. կետում նշված բանկային հաշվից: Բրոքերային հաշվից ելքագրված միջոցները կարող են ուղղվել միմիայն սույն պայմանագրի 2.2. կետում նշված բանկային հաշվին: Բրոքերային հաշվի համարումը և նվազեցումը իրականացվում է հաճախորդի հանձնարարականի հիման վրա (հավելված 6), բացառությամբ սույն պայմանագրի 3.17. և 3.18. կետերում նշված դեպքերի:
- 2.10. Բրոքերային հաշվի դրական դրամական մնացորդի դիմաց Բանկը հաշվարկում և վճարում է տոկոսներ՝ հավելված 1-ում սահմանված դրույքաչափով: Տոկոսագումարները վճարվում են կիսամյակը մեկ անգամ և մուտքագրվում են սույն պայմանագրի 2.2. կետում նշված Հաճախորդի բանկային հաշվին:
- 2.11. Բանկի կողմից տրամադրվող առևտրահաշվարկային, վերլուծական և այլ՝ ֆինանսական գործիքների գների և փոխարժեքների վերաբերյալ, ծրագրերից օգտվելու համար Հաճախորդը ստորագրում է «Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվությունների, ֆինանսական գործիքների գների ու փոխարժեքների, վերլուծական նյութերի ու ծրագրերի չտարածման մասին ծանուցումը» (հավելված 8):
- 2.12. Հաճախորդի կողմից սույն պայմանագրի շրջանակներում իրականացված գործառնությունները ձևակերպվում և արտացոլվում են հաճախորդի բանկային և բրոքերային հաշիվներում:
- 2.13. Հաճախորդի կողմից իրականացված գործարքների դիմաց Բանկը գանձում է կոմիսիոն վճարներ՝ համաձայն սույն պայմանագրով սահմանված սակագների (հավելված 1):

### **3. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 3.1. Պայմանագիրը նախատեսում է ֆինանսական գործիքների, ներառյալ ածանցյալ ֆինանսական գործիքների, առուվաճառք:
- 3.2. Կոնկրետ ֆինանսական գործիքները կամ ֆինանսական գործիքների խմբերը, որոնցով մատուցվում են սույն պայմանագրով նկարագրված բրոքերային ծառայությունները, նշվում են Հավելված 1-ում:
- 3.3. Մատուցվող բրոքերային ծառայությունների սակագները, ինչպես նաև գործարքների իրականացման և Հաճախորդի բրոքերային հաշվի սպասարկման պայմանները ներկայացվում են Հավելված 1-ում, իսկ 2.4 կետում նշված դեպքերում՝ նաև սույն պայմանագրին կից Պահառության պայմանագրում ու Պահառության պայմանագրի հավելվածներում:
- 3.4. Այն դեպքերում, երբ որոշակի ֆինանսական գործիքների, ինչպես նաև դրանցով գործառնությունների առանձնահատկությունները կամ սույն պայմանագրով նախատեսված գործարքներին առնչվող այլ գործառնություններ հնարավոր չէ ներառել սույն պայմանագրում և պայմանագրի հավելվածներում, նշված ֆինանսական գործիքներով Բանկի կողմից բրոքերային ծառայություններ մատուցելու (Հաճախորդի կողմից նշված ֆինանսական գործիքներով առուվաճառք իրականացնելու) կամ այլ գործառնություններ իրականացնելու նպատակով Կողմերը, սույն Պայմանագրից բացի, կնքում են նաև այլ՝ հավելյալ համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք գործում են կից սույն պայմանագրին և հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:
- 3.5. Պայմանագրով կատարվող բոլոր գործարքները ենթակա են այն բորսաների, կազմակերպված արժեթղթերի շուկաների, համապատասխան առևտրային և վերջնահաշվարկային համակարգերի, դեպոզիտարիաների և այլն (առկայության դեպքում) օրենքներին, կանոնակարգերին, այլ իրավական ակտերին և սովորույթներին, եթե այդպիսիք կան, որտեղ Բանկի կամ իր գործակալների կողմից իրականացվում են այդ գործարքները:
- 3.6. Սույն պայմանագրով Հաճախորդը համաձայնվում է այն բոլոր գործառնությունների հետ, որոնք Բանկն այսուհետ կկատարի Հաճախորդի հանձնարարականով՝ Հաճախորդի հաշվին և Կողմերի նախնական գրավոր կամ բանավոր համաձայնությունների հիման վրա: Նույնը վերաբերվում է նաև սույն պայմանագրով նախատեսված բրոքերային Հաշիվը սպասարկելու բոլոր անհրաժեշտ գործողություններին:
- 3.7. Պայմանագիրը չի նախատեսում Հաճախորդի հանձնարարականների կատարում՝ եթե վերջիններս կապված են Հաճախորդին պատկանող այն ֆինանսական գործիքների հետ, որոնք պահվում են Բանկի պայմանագրային կամ լիազորագրային իրավունքներից դուրս գտնվող հաշիվներին:
- 3.8. Կողմերը համաձայնվում են, որ բրոքերային Հաշվին գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը Հաճախորդի և Բանկի միջև (լիովին կամ որևէ կերպ մասնատված), չի կարող դիտարկվել որպես Բանկի կամ վերջինիս պատասխանատու աշխատակցի կողմից տրամադրվող խորհրդատվություն՝ այս կամ այն ֆինանսական գործիքը գնելու կամ վաճառելու վերաբերյալ:
- 3.9. Սույն պայմանագրով Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Բանկի կողմից ընդունվող հանձնարարականների/պատվերների տեսակների և դրանց առանձնահատկությունների հետ: Հաճախորդը համաձայնվում է իր հանձնարարականները/պատվերները տրամադրել Բանկին՝ սույն պայմանագրին համապատասխան: Հանձնարարականների/պատվերների կիրառվող ձևերը ներկայացված են սույն պայմանագրի Հավելվածներ 6-ում և 7-ում:
- 3.10. Հաճախորդը գործարքների պայմանների վերաբերյալ հարցումները, նրանց իրականացման հրահանգները, ինչպես նաև գործարքի իրականացման հաստատումները Բանկին հասցեագրում է՝
  - Ներկայանալով Բանկ և լրացնելով գործարքի իրականացման վերաբերյալ հայտ (Հավելված 7)
  - Հեռախոսազանգի միջոցով,
  - Համակարգչային (ինտերնետային) կապի միջոցով:
- 3.11. Հեռախոսային հրահանգներ Հաճախորդը կարող է տալ միայն Բանկի կողմից սահմանված ժամերին և կարգով, Բանկի պատասխանատու աշխատակցի լրացուցիչ համաձայնությամբ՝ Բանկի պատասխանատու աշխատակցի կողմից նշված հեռախոսահամարով զանգահարելու դեպքում: Գործարքի իրականացման հեռախոսային հրահանգների դեպքում (այդ թվում ոչ շուկայական գնով գործարքի իրականացման հայտերի տեղադրման հրահանգների դեպքում) Հաճախորդը հայտնում է իր բրոքերային հաշվի համարը (Բանկի պատասխանատու աշխատակցի պահանջով նաև այլ լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ գաղտնաբառ), ֆինանսական գործիքի անվանումը՝ համապատասխան չափանիշներով, գործարքի ծավալը և, Բանկի պատասխանատու աշխատակցից ստանալով առքի և վաճառքի տվյալ պահի համար սահմանված գները՝ կամ տալիս է առքի, կամ վաճառքի հրահանգ, կամ ոչ շուկայական գներով գործարքի իրականացման հայտի հաստատման վերաբերյալ իր վերջնական համաձայնությունը, կամ հրաժարվում է գործարքից: Հեռախոսային հրահանգների դեպքում

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ամսաթիվ 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/3</i>

- (այդ թվում ոչ շուկայական գնով գործարքի իրականացման հայտերի տեղադրման հրահանգների դեպքում) Բանկը հաստատում է գործարքի հիմնական պայմանները՝ ֆինանսական գործիքի տեսակը, գործարքի տեսակը (առք կամ վաճառք), գործարքի ծավալը և գործառնության կատարման գինը:
- 3.12. Հեռախոսային հրահանգների դեպքում Հաճախորդի բոլոր հարցումները, հրահանգները և հաստատումները ձայնագրվում և պահվում են առնվազն մեկ շաբաթ ժամկետով: Հաճախորդը համաձայնվում է իր կողմից ևս ձայնագրել բոլոր հեռախոսային հրահանգները, հարցումները, հաստատումները (անկախ Բանկի կողմից կատարված ձայնագրությունների) և պահպանել դրանք՝ առնվազն մեկ շաբաթ ժամկետով: Կողմերն ընդունում են, որ հեռախոսային խոսակցության մագնիսական կամ էլեկտրոնային ձայնագրությունները ծառայում են որպես ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման ժամանակ:
- 3.13. Գործարքների հետախոսագանգի միջոցով կամ համակարգչային (ինտերնետային) կապի միջոցով իրականացման դեպքում, յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում (կամ Բանկի համաձայնությամբ այլ պարբերականությամբ) կողմերը գրավոր հաստատում են իրականացված բոլոր գործարքներն ամփոփ տեսքով՝ վավերացնելով դրանք լիազորված անձանց ստորագրություններով:
- 3.14. Բանկի համաձայնությամբ, Հաճախորդի հնարավորություններից ելնելով, և նրա հարմարության համար, Հաճախորդը կարող է իր ստորագրությամբ հաստատել համապատասխան ժամանակահատվածին վերաբերող խմբավորված հանձնարարականները՝ ավելի ուշ, քան 3.13. կետում նշված ժամանակահատվածը:
- 3.15. Գործարքի (գործարքների) պայմանների գրավոր հաստատումից խուսափելը չեղյալ չի համարում համակարգչային կամ հեռախոսային կապով տրված հրահանգները և/կամ հաստատումները: Նշված դեպքերում կողմերն անհապաղ ձեռնարկում են միջոցառումներ տարածայնությունները վերացնելու ուղղությամբ:
- 3.16. Գործառնության (գործառնությունների) իրականացման հետ կապված անճշտությունների, տեխնիկական կամ այլ պատճառներով առաջացած սխալների վերաբերյալ Հաճախորդը Բանկին հայտնում է գրավոր՝ ոչ ուշ, քան գործարքի (գործարքների) իրականացումից սկսած երեք աշխատանքային օրերի ընթացքում:
- 3.17. Եթե Բանկից անկախ պատճառներով տեղի են ունեցել անճշտություններ և սխալներ՝ կապված Հաճախորդի գործարքի վերաբերյալ պատվերների իրականացման հետ, ապա Բանկը Հաճախորդի հաշիվներում իրականացնում է ճշտումներ և այդ մասին իրազեկում Հաճախորդին՝ Հավելված 5-ում նշված կապի միջոցներով:
- 3.18. Եթե Հաճախորդի իրականացրած գործարքների հետևանքով ստեղծված բաց դիրքերի (վերագնահատված ընթացիկ շուկայական գներով) հետևանքով Հաճախորդը կրում է վնասներ, և հնարավոր չէ վերջինիս բրոքերային հաշվի որևէ ենթահաշվով կամ մի քանի ենթահաշիվներով իրականացնել գործարքի պատվերներ, կամ եթե բաց դիրքերը (ընթացիկ շուկայական գներով հաշվարկված) Հաճախորդին հասցնում են կամ կարող են հասցնել այնպիսի վնասներ, որոնք գերազանցում են սույն պայմանագրով կամ հավելյալ համաձայնագրերով սահմանված վնասների թույլատրելի շեմը, և եթե դրա հետևանքով վնասների հետագա ավելացման դեպքում Հաճախորդը չի կարողանա իրականացնել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապա Բանկը իրավասու է չիրականացնել այդ գործարքները կամ իրականացնել դրանք՝ առանց տվյալ պահին Հաճախորդին տեղեկացնելու:


**4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Բանկը պարտավոր է՝**

- 4.1. Կատարել Հաճախորդի բոլոր հրահանգները, եթե վերջիններս համապատասխանում են սույն պայմանագրի շրջանակներում սահմանված պահանջներին:
- 4.2. Ապահովել Հաճախորդի հաշվին գտնվող միջոցների անվտանգությունը և գործարքների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:
- 4.3. Տրամադրել Հաճախորդին տեղեկատվություն (ըստ Հաճախորդի պահանջի) վերջինիս կողմից իրականացված գործարքների վերաբերյալ:
- 4.4. Տրամադրել Հաճախորդին ընթացիկ բանկային և բրոքերային հաշիվների քաղվածքները:

**Բանկն իրավունք ունի՝**

- 4.5. Չիրականացնել Հաճախորդի հրահանգները, եթե վերջիններս հաղորդված են ոչ պատշաճ ձևով, կամ սույն պայմանագրի պահանջների խախտումով:
- 4.6. Միակողմանիորեն, առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության, վերջինիս ընթացիկ բանկային հաշվից (2.2. կետում նշված) կամ բրոքերային հաշվից (2.3. կետում նշված) գանձել միջոցառվածարներ և այլ գումարներ, որոնք սահմանված են սույն պայմանագրով կամ Բանկի սակագներով:
- 4.7. Միակողմանիորեն, առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության, վերջինիս բրոքերային հաշվից բանկային հաշվին փոխանցել գումարներ, որոնք անհրաժեշտ են հաճախորդի՝ սույն պայմանագրից բխող պարտավորությունները կատարելու համար:
- 4.8. Միակողմանիորեն, առանց Հաճախորդի նախնական համաձայնության, վերջինիս հաշիվներից դուրս գրել սխալմամբ մուտքագրված գումարները:
- 4.9. Փոփոխել և/կամ լրացնել բրոքերային ծառայությունների մատուցման պայմանները, ինչպես նաև սակագները՝ նախօրոք 5 աշխատանքային օր առաջ տեղյակ պահելով Հաճախորդին՝ հավելված 5-ում նշված եղանակներով:
- 4.10. Հեռախոսագանգով կամ ինտերնետային կապով գործարքի (գործարքների) իրականացման հետ կապված տարածայնությունների ժամանակ հրաժարվել Հաճախորդի կողմից ներկայացված պահանջներն իրականացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկելուց, եթե Հաճախորդի կողմից պահանջները ներկայացված չեն 3.16. կետում նշված ժամկետում:
- 4.11. Հեռախոսային կապով իրականացված գործառնությունների հետ կապված տարածայնությունների ժամանակ հրաժարվել Հաճախորդի կողմից ներկայացված պահանջներն իրականացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկելուց, եթե Հաճախորդը չի ներկայացնում Բանկի պատասխանատու աշխատակցի հետ հեռախոսային խոսակցության իր կողմից կատարված ձայնագրությունը:
- 4.12. Միակողմանիորեն լրծել պայմանագիրը՝ նախօրոք N օր առաջ (N-ը սահմանվում է հավելված 1-ում) այդ մասին գրավոր տեղյակ պահելով Հաճախորդին:

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Անսաթիվ 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/4</i>

4.13. Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ առանց այդ մասին նախօրոք տեղյակ պահելու հաճախորդին, եթե վերջին 15 աշխատանքային օրերի ընթացքում սույն պայմանագրով նշված բրոքերային հաշվին հաճախորդը չունի բաց դիրքեր, և միևնույն ժամանակ բրոքերային հաշվի մնացորդը չի գերազանցում հավելված 1-ում նշված գումարը՝ վերաբերյալ հաշվի նվազագույն մնացորդին:

**Հաճախորդը պարտավոր է՝**

- 4.14. Վճարել Բանկին սույն պայմանագրով և Բանկի սակագներով նախատեսված միջնորդավճարներ և այլ գումարներ:
- 4.15. Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվությունները, ֆինանսական գործիքների գներն ու փոխարժեքները, վերլուծական նյութերն ու ծրագրերը չտրամադրել երրորդ անձանց՝ վճարովի կամ անվճար հիմունքներով:
- 4.16. Ճշգրտորեն առաջնորդվել սույն պայմանագրի և դրան կից հավելվածների այլ պահանջներով:

**Հաճախորդն իրավունք ունի՝**

- 4.17. Իրականացնել սույն պայմանագրով սահմանված բոլոր գործառնությունները յուրաքանչյուր աշխատանքային օր և Բանկի կողմից Հավելված 1-ում նշված ժամերին:
- 4.18. Իրականացված գործարքների վավերացումները ստանալ Բանկի կողմից դրված կնիքով կամ ստորագրություններով հաստատված տեսքով:
- 4.19. Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը ցանկացած պահի: Սույն պայմանագրի 2.2. կետում նշված բանկային հաշվի փակումը կամ սույն պայմանագրի 2.3. կետում նշված բրոքերային հաշվի ամբողջ մնացորդի նվազեցումը (ես պահանջումը) համարվում է պայմանագրի լուծում:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- 5.1. Բանկը պատասխանատու չէ՝
  - ա) Հաճախորդի կրած ցանկացած վնասների համար, որոնք հետևանք են ֆինանսական շուկաներում գործող առևտրային համակարգերի խափանման, տեղեկատվության փոխանակման ընդհատումների կամ ուշացումների կամ մասն տեխնիկական բնույթի սխալների, քանի դեռ Հաճախորդը չի ապացուցել, որ իր կրած վնասը արդյունք էր Բանկի դիտավորության կամ կոպիտ անզգուշության,
  - բ) Սույն պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից ձեռնարկված ցանկացած գործողությունների համար, որոնց արդյունքում հաճախորդը վնասներ է կրել:
- 5.2. Բանկը պատասխանատու չէ որևէ ֆինանսական շուկայի, շուկայի առանձին մասի, հարթակի փակման կամ գործունեության ժամանակավոր դադարեցման, առևտրի պայմանների աննախադեպ փոփոխությունների կամ որևէ հանգամանքի տեղի չունենալու համար, որով Բանկը պայմանավորում էր գների տրամադրումը: Նման դեպքերում Բանկն իր հիմնավոր կարծիքով, իրավունք ունի սահմանել, որ տեղի ունի արտակարգ իրավիճակ կամ շուկայական բացառիկ իրադրություն և կարող է կասեցնել կամ փոփոխել սույն Պայմանագրի բոլոր պայմանները, կամ պայմանների մի մասը:
- 5.3. Հաճախորդը պատասխանատու չէ Բանկի պատասխանատու աշխատակցի (աշխատակիցների) կողմից սխալմամբ՝ ոչ Հաճախորդի հրահանգով բրոքերային հաշվի ենթահաշիվներից կատարված այն տեղափոխությունների (փոխանցումների) համար, որոնց հետևանքով Հաճախորդը կրել է վնասներ:

**6. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ**


Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման համար, եթե դա հետևանք է անհաղթահարելի ուժի ազդեցության (տեխնիկական դժվարություններ, երկրաշարժեր, հրդեհներ, ջրհեղեղներ, մրրիկներ, պատերազմներ և ռազմական գործողություններ, գործող օրենսդրության փոփոխություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի խոչընդոտում են պարտավորությունների կատարմանը և այլն) առաջացման, որոնք չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել:

**7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 7.1. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով:
- 7.2. Վեճերի և տարաձայնությունների ժամանակ կողմերը համատեղ ստուգում են (անհրաժեշտության դեպքում) մագնիսական կամ էլեկտրոնային ձայնագրությունները, որոնք հիմք են հանդիսանում վերջնական որոշում կայացնելիս:
- 7.3. Բանակցությունների ընթացքում համաձայնության չգալու դեպքում բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով:
- 8.2. Եթե կողմերից որևէ մեկը ոչ ուշ քան պայմանագրի ավարտից 15 օր առաջ գրավոր չի հայտնում հակառակ կողմին պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին, ապա վերջինիս գործողության ժամկետը երկարաձգվում է յուրաքանչյուր անգամ ևս 1 (մեկ) տարով:
- 8.3. Սույն պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ամսաթիվ</i> 29.06.2013թ.	<i>Խմբագրություն</i> 1	1/5

8.4. Սույն պայմանագիրը և դրա անբաժանելի մասը հանդիսացող հավելվածները կազմված են երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ

**Բ Ա Ն Կ**

Հայաստանի Հանրապետություն,  
0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,  
Վազգեն Սարգսյանի 26/1  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ  
հեռախոս՝ .....

**Հ Ա Ճ Ա Խ Ո Ր Ղ**


.....  
.....  
.....  
.....

**Գործադիր տնօրեն՝**

\_\_\_\_\_  
/Անուն Ազգանուն/

**Պաշտոն՝**

\_\_\_\_\_  
/Անուն Ազգանուն/

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ամսաթիվ 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/6</i>

### ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին  
 «.....» ..... 20...թ. N ..... պայմանագրի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱԳՆԵՐԸ**


1. Գործարքներն իրականացվում են ստորև ներկայացված հիմնական և ածանցյալ ֆինանսական գործիքներով.
- բաժնետոմսեր
  - պարտատոմսեր, մուրհակներ
  - օպցիոններ
  - ֆյուչերսներ, ֆորվարդներ
  - հիփոթեքային պայմանագրերով ապահովված արժեթղթեր և մնանատիպ ածանցյալ արժեթղթեր
  - բաժնեմասեր, փայաբաժիններ և մնանատիպ ածանցյալ արժեթղթեր
  - ներդրումային հիմնադրամների արժեթղթեր և մնանատիպ ածանցյալ արժեթղթեր
  - պետական և համայնքային պարտատոմսեր
  - արժույթային պայմանագրեր և մնանատիպ ածանցյալ արժեթղթեր
  - ապրանքի մատակարարման պայմանագրեր, առևտրային արժեթղթեր
  - կյանքի կամ գույքի ապահովագրում, ապահովագրական ընկերությունների այլ պայմանագրեր
  - «ռեպո» գործարքներ և մնանատիպ պայմանագրեր
  - արժեթղթերով փոխառություն և վարկավորում
  - մասնավորեցման հետ կապված գործարքների /մասնակցությունը մրցույթներին և աճուրդներին
  - այլ գործիքներ (*Համառոտ նկարագրություն*)

2. Գործարքների իրականացման հիմնական պայմանները նշվում են սույն Հավելվածում և/կամ հրապարակվում են Բանկին պատկանող ինտերնետային կայքերում.

a. Սույն հավելվածով սահմանվում են հետևյալ պայմաններն ու սակագները՝

Ֆինանսական գործիքը կամ գործիքների խումբը	Գործարքի իրականացման համար օգտագործվող կապի միջոցները	Գործարքի վերաբերյալ հայտերի ընդունման աշխատանքային ժամերը	Մակագինը
Ռուսական բաժնետոմսեր	<input type="checkbox"/> Առձեռն <input type="checkbox"/> Հեռախոսակապ	Ժամը 10 :00-ից 17:30-ը	..... ՀՀ դրամ ամեն մի ֆինանսական գործիքով իրականացված գործարքի համար
Ամերիկյան պարտատոմսեր	<input type="checkbox"/> Առձեռն <input type="checkbox"/> Հեռախոսակապ <input type="checkbox"/> Էլեկտրոնային փոստ	Ժամը 10:00-ից 17:30-ը	..... ՀՀ դրամ ամեն մի ֆինանսական գործիքով իրականացված գործարքի համար


b. Հաճախորդը որպես հիմք է ընդունում գործարքների իրականացման վերաբերյալ Բանկին պատկանող ինտերնետային կայքերում գետեղված այն մանրամասները, որոնք բացակայում են սույն պայմանագրում կամ պայմանագրին կից հավելվածներում, և որոնց տեղյակ լինելը անհրաժեշտ է Հաճախորդին գործարք կատարելու (չկատարելու) համար:

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ամսաթիվ 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/7</i>

- c. Եթե սույն պայմանագրի շրջանակներում գործարք իրականացնելու (չիրականացնելու) համար Հաճախորդը կարիք ունի այլ կարգի՝ առավել մանրամասն և հավելյալ բացատրությունների, որոնք վերաբերվում են գործառնությունների բնույթին ու սկզբունքներին, չնայած որ ընդունված են ֆինանսական շուկաներում գործառնությունների համար և այդ իսկ պատճառով (և/կամ այլ պատճառներով) մանրամասնված չեն (բացակայում են) սույն պայմանագրում, պայմանագրին կից հավելվածներում և Բանկին պատկանող ինտերնետային կայքերում, ապա Հաճախորդը նշված բացատրությունները ստանում է Բանկի պատասխանատու աշխատակցից՝ Բանկ այցելության, հեռախոսազանգի կամ Հավելված 5-ում նշված այլ կապի միջոցներով:
3. Պայմանագրի 2.6. կետում նշված բրոքերային հաշվի սկզբնական մնացորդի նվազագույն չափը սահմանվում է \$5000-ին (հինգ հազար ԱՄՆ դոլարին) համարժեք գումար, իսկ առավելագույն գումարը՝ \$100000-ին (հարյուր հազար ԱՄՆ դոլարին) համարժեք գումար:
  4. Պայմանագրի 2.7. կետում նշված հաշվարկային արժույթ է ընդունվում ԱՄՆ դոլարը (արժույթի կոդը՝ USD):
  5. Պայմանագրի 2.9. կետում նշված ժամանակահատվածը սահմանվում է Երևանի ժամանակով ժամը 10:00-ից մինչև 17:30-ը:
  6. Պայմանագրի 2.10. կետում նշված տոկոսների վճարումների համար որպես դրույքաչափ է սահմանվում ընթացիկ բանկային հաշիվների համար բանկի սակագներով սահմանված դրույքաչափը:
  7. Պայմանագրի 4.12. կետում նշված օրերի քանակը՝ N-ը, սահմանվում է 30 օր (N=30):
  8. Պայմանագրի 4.13. կետում նշված նվազագույն մնացորդը՝ վերաբերյալ բրոքերային հաշվին, սահմանվում է \$100 (հարյուր ԱՄՆ դոլար):

**Հաճախորդ** (ստորագրություն) /Անուն Ազգանուն/

“.....” ..... 20....թ.

	<b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>	<b>FO 72-11-01</b>		
	<b>Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագիր</b>	<i>Ստորագրվել է 29.06.2013թ.</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>1/8</i>

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ֆինանսական գործիքներով բրոքերային ծառայությունների մատուցման մասին  
 «.....»..... 20....թ. N ..... պայմանագրի

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

#### Ֆինանսական շուկաներում գործառնությունների առանձնահատկությունների և ռիսկերի մասին


«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն սույնով տեղեկացնում է, որ ֆինանսական գործիքներով իրականացվող գործառնություններն ունեն մեծ ռիսկայնություն: Ռիսկերը կարող են հանգեցնել Ձեր ակտիվների զգալի կորուստերի: Կրած վնասների արդյունքում Դուք կարող եք ամբողջությամբ կորցնել Ձեր կողմից ներդրված գումարները (ինչպես սկզբնական, այնպես էլ գործառնությունների իրականացման ընթացքում համարված), որոնց միջոցով իրականացվել են գործարքներ ֆինանսական գործիքներով:

Մինչև բրոքերային ծառայություններից օգտվելը, ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման նպատակով բրոքերային հաշիվ բացելը և Կոնվերսբանկի հետ պայմանագիր կնքելը Ձեզ անհրաժեշտ է գիտակցել հետևյալը՝

- Հարկ է մանրակրկիտ վերլուծել սեփական ֆինանսական հնարավորությունները ֆինանսական գործիքներով գործառնությունների իրականացման ժամանակ, լիովին ծանոթ լինել գործարքների իրականացման կարգին և սկզբունքներին;
- Ձեզ անհրաժեշտ է գերծ մնալ գործառնություններ իրականացնելուց, եթե Դուք չգիտեք գործառնությունների բնույթը և հնարավոր կորուստերի (ռիսկերի) մակարդակը;
- Դուք պետք է համոզված լինեք, որ ֆինանսական գործիքներով գործառնությունների իրականացման կարգը, սկզբունքները, ինչպես նաև Կոնվերսբանկի հետ կնքվող պայմանագրով սահմանված սակագները բավարարում են Ձեզ և համապատասխանում են Ձեր ֆինանսական հնարավորություններին;
- Ձեր կատարած ներդրումների վրա շուկայական փոփոխությունների ազդեցությունն ուսումնասիրելու, սեփական առևտրային մարտավարությունների և ռիսկերի կատարման սկզբունքների մշակման նպատակով Դուք պետք է արդեն փորձարկումներ իրականացրած լինեք ոչ իրական (փորձնական) առևտրային հաշիվներով;
- Փոխարժեքների և գների կտրուկ տատանումները, որոնք բավական հաճախ են տեղի ունենում ֆինանսական շուկաներում, կարող են գործել ինչպես ի օգուտ, այնպես էլ ի վնաս Ձեզ;
- Շուկայական փոխարժեքների և գների ոչ մի փոփոխություն, ինչպես նաև ոչ մի շուկայական իրադրություն չի կարող հանդիսանալ նախկինում տեղի ունեցած փոփոխությունների կամ նախկին իրադրությունների բացարձակ կրկնօրինակը, ուստի նույնիսկ Ձեր փորձն ու պատրաստվածությունը չեն կարող Ձեզ ապահովագրել շուկայական աննախադեպ փոփոխությունների հետևանքով ստացվող կորուստներից;
- Սահմանափակման (Limit, Stop և այլ կարգի) հրահանգները իրականում ոչ միշտ է, որ Ձեզ ապահովագրում են նախատեսվածից առավել վնասներ կրելու ռիսկից, քանզի որոշ շուկայական պայմաններ կարող են անհնարին դարձնել սահմանափակման հրահանգների ճշգրիտ (Ձեր հրահանգում սահմանված պայմաններով) իրականացումը;
